ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՎԼԱԴԻՄԻՐ ՊՈՒՏԻՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Մարտի 25-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ընդունեց ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինին՝ ՌԴ նախագահի խորհրդական Սերգեյ Պրիխոդկոյի, ՀՀ-ում Ռուսաստանի արտակարգ և լիազոր դեսպան Անատոլի Դրյուկովի և Ռուսաստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արմեն Սմբատյանի ուղեկցությամբ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ողջունելով ՌԴ նախագահի անդրանիկ այցը հայոց նվիրական հոգևոր կենտրոն, անդրադարձավ հայ և ռուս ժողովուրդների դարավոր ջերմ եղբայրական կապերին: «Սա պատմական այցելություն է, որ պիտի արձանագրվի Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տարեգրության մեջ՝ որպես մի նոր վկայություն մեր ժողովուրդների դարավոր բարեկամության, որի ակունքներում կանգնած են նաև մեր երկու Եկեղեցիները: ...Ուրախ ենք, որ այդ բարեկամության ավանդույթներն այսօր նույնպես շարունակվում են բոլոր ոլորտներում՝ մեր ժողովուրդներին հույսով և հավատով լցնելով հանդեպ մեր կյանքի նոր ժամանակները»,- ասաց Նորին Սրբությունն իր խոսքում: Վեհափառ Հայրապետն իր գոհունակությունն ու գնահատանքը հայտնեց ՌԴ նախագահին այն բանի համար, որ Ռուսաստանի հասարակական կյանքի բարեփոխումների ընթացքում նա մեծապես կարևորում է հոգևոր արժեքների դերն ու նշանակությունը:

Հայոց Հայրապետը նաև շնորհակալություն հայտնեց պրն Պուտինին հայ ժողովրդի զավակների հանդեպ ցուցաբերվող հոգատար վերաբերմունքի համար, որի շնորհիվ Ռուսաստանի օրինյալ հողում բնակվող հայորդիներն ապրում են իրենց ազգային արժեքներով ու ավանդույթներով:

Շնորհակալություն հայտնելով ջերմ խոսքերի համար՝ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինն ուրախություն հայտնեց հանդիպման, ինչպես նաև հոգևոր ոլորտում երկու երկրների փոխգործակցության քննարկման հնարավորության համար: Իր խոսքում ՌԴ նախագահը նշեց, որ երկու ժողովուրդների միջև առկա հարաբերությունները հոգևոր հիմք ունեն, և անդրադարձավ Ռուս Ուղղափառ և Հայ Առաքելական Եկեղեցիների միջև դարերի ընթացքում ձևավորված և այսօր էլ շարունակվող ջերմ հարաբերություններին: Նա ընդգծեց նաև Ամենայն Հայոց Հայրապետի և Հայոց Եկեղեցու կարևոր ներդրումն ու դերը ինչպես միջպետական հարաբերությունների զարգացման, այնպես և Կովկասում խաղաղության հաստատման գործում:

Հանդիպման ավարտին Վեհափառ Հայրապետն ու Վլադիմիր Պուտինն այցելեցին Վեհարանի թանգարան, ապա՝ Մայր Տաճար, ուր Հայոց Հայրապետն աղոթք բարձրացրեց առ Աստված հայ և ռուս ժողովուրդների բարեկամության անսասանության և երկու երկրների առաջընթացի և բարօրության համար:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի պատասխանատու Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանը, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպիսկոպոս Կճոյանը, Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանը և Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Академия наук Армянской ССР
Фундаментальная библиотека

Ա. ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀՀ ԴԵՍՊԱՆԻ ՀԵՏ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԸ ՄՈՄ է ՎԱՌՈՒՄ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Բ. ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՒ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՀԵՏ ՎԼԱԴԻՄԻՐ ՊՈՒՏԻՆԸ ԴԻՏՈՒՄ է ՎԵՀԱՐԱՆԻ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԿՏԱՎՆԵՐԸ